ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Լրամշակված նախագիծ

Կ-1183-05.11.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 108-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 26-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) 26-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 27-րդ կետ.

«27) պետության կողմից ֆինանսավորվող՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի (լիզինգի) և դրանց գծով հաշվարկվող տոկոսադրույքների սուբսիդավորման գումարները՝ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում՝

1) բ. ենթակետից հանել ««բ2»,» բառը,

2) բ2. ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

3) բ3. ենթակետից հանել «՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 20-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) 20-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 21-րդ կետ.

«21) պետության կողմից ֆինանսավորվող՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի (լիզինգի) տոկոսադրույքների սուբսիդավորման գումարների հաշվին կատարված ծախսերը՝ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

Կ-1183-05.11.2025-ՏՀ-011/1

Լրամշակված ~~նախագիծ~~

Երկրորդ ընթերցում

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 5. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 108-րդ հոդվածի 1-ին մասի՝

3) 26-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

4) 26-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 27-րդ կետ.

«27) պետության կողմից ֆինանսավորվող՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի (լիզինգի) և դրանց գծով հաշվարկվող տոկոսադրույքների սուբսիդավորման գումարները՝ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:»:

Հոդված 6. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում՝

4) բ. ենթակետից հանել ««բ2»,» բառը,

5) բ2. ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

6) բ3. ենթակետից հանել «՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի՝

3) 20-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

4) 20-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 21-րդ կետ.

«21) պետության կողմից ֆինանսավորվող՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի (լիզինգի) տոկոսադրույքների

սուբսիդավորման գումարների հաշվին կատարված ծախսերը՝ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է ~~2022~~ 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1183-05.11.2025-ՏՀ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հոդված 9.

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծով կարգավորվող խնդիրները առկա են դեռևս 2021 թվականից սկսած՝ առաջարկվում է նախագծի անցումային դրույթներով նախատեսել, որ նախագծով առաջարկվող կարգավորումները կիրառելի են լինելու 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:	**Ընդունվել է:** Նախագծով սահմանվել է, որ նախագծով առաջարկվող կարգավորումները կիրառելի են 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:	**Ընդունվել է:**